ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«07» հոկտեմբերի 2025թ. No 1/1-Գ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8»**

Մասնակից՝ **«ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին**
/ՀՎՀՀ՝ 02910767, գործունեության հասցե՝ ք. Երևան Նալբանդյան փող., շ25/14 76 /

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, իր կարիքների համար ծառայողական շների սննդի (չոր կեր) ձեռքբերման նպատակով, 15.11.2024թ. հրապարակել է էլեկտրոնային աճուրդի հայտարարություն և հրավեր:

29.11.2024թ. հայտերի բացման և ամփոփման նիստի ընթացքում ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8 ծածկագրով գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն, որի հայտի ուսումնասիրությամբ գնահատող հանձնաժողովը պարզել է, որ այն չի համապատասխանում են հրավերեի պահանջներին՝ մասնավորապես. ապրանքի ամբողջական նկարագիր դաշտը համակարգում լրացված չէ, ինչպես նաև հայտում ներառված Հավելված 1-ը Դիմում Հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված ձևին, դրանում բացակայում է ընկերությանը փոխկապակցված անձանց վերաբերյալ հատվածը, և Դիմում Հայտարարությունը սահմանված կարգով հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նույն օրը «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին առաջարկվել է հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

03.12.2024թ. գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, վերջինիս հայտը գնահատել է բավարար և նրան ճանաչվել որպես ընտրված մասնակից:

Անգործության ժամկետի ավարտից հետո 19.12.2024թ. «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին համակարգի միջոցով ուղարկվել է պայմանագիր կնքելու ծանուցում և պայմանագրի նախագիծ, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հաշվի առնելով վերոգրյալը «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

27.12.2023թ. գնահատող հանձնաժողովը որոշել է ընթացակարգը հայտարարել չկայացած և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ -ի վերաբերյալ նյութերն ուղարկել լիազոր մարմնին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու համար:

1. Հիմնավորում և եզրահանգում

«Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով որոշում եմ՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1/7/2025

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ